



GOETHE-ZENTRUM  
KOOPERATIONSPARTNER



Deutscher  
Übersetzerfonds



Die Beauftragte der Bundesregierung  
für Kultur und Medien

## Վիցե-Վերզա. Գերմաներեն–հայերեն թարգմանիչների աշխատարան հոկտեմբերի 20-25-ին, 2024 Երևանի Գյոթե կենտրոնում, Հայաստան

*Կազմակերպում է Երևանի Գյոթե կենտրոնը Գերմանիայի թարգմանիչների ֆոնդի  
ՏՈԼԵԴՈ ծրագրի հետ համագործակցությամբ, ԳԴՀ-ի կառավարության Մշակույթի և  
ԶԼՄ-ների պետական նախարարի աջակցությամբ:*

Հայերենից գերմաներեն և գերմաներենից հայերեն գրական թարգմանիչները  
հրավիրվում են 2024-ին ևս մասնակցելու մեկ շաբաթյա աշխատարանի, որն այս  
անգամ տեղի կունենա Երևանի Գյոթե կենտրոնում:

Աշխատարանը, որի ընթացքում հիմնականում քննարկվելու են թարգմանիչների  
կողմից ներկայացված թարգմանությունները, վարելու են երեք փորձառու  
թարգմանիչներ: Ընդ որում ուշադրության կենտրոնում լինելու են թարգմանության  
վերաբերյալ ընդհանուր թեմաներ և հիմնական խնդիրներ: Աշխատարանի նպատակն  
է, բարձրացնել գրական թարգմանության արհեստավարժության մակարդակը, ինչպես  
նաև համախմբել թարգմանիչներին, հեղինակներին, հրատարակիչներին, աջակցող  
կառույցներին ու ստեղծել միասնական ցանց: Այդ պատճառով աշխատարանի  
շրջանակներում քննարկվելու են նաև թարգմանչի աշխատանքին վերաբերող հարցեր:  
Բացի դրանից ծրագրված են հանդիպումներ գրողների, հրատարակիչների և  
հայկական գրական դաշտի այլ ներկայացուցիչների հետ:

Աշխատարանին կարող են մասնակցել տասը թարգմանիչ անկախ տարիքից,  
փորձառու և սկսնակ: Դիմելու նախապայմանը՝ նպատակային լեզվի իմացությունն է  
մայրենի լեզվի մակարդակով, ինչպես նաև սերը լեզվի և գրականության հանդեպ:  
Հետաքրքրվածները դիմեն մինչև **30.06.2024**, ներկայացնելով 5-7 էջ թարգմանություն  
իրենց կողմից ընտրված գերմաներեն կամ հայերեն տեքստերից: Մասնակիցների  
ընտրությունը տեղի կունենա մինչև **հուլիսի 15-ը**:

**Մեմինարը վարողներ.** Գայանե Գինոյան, Վալերի Էնգլեր և Ռոզեմարի Թիցե  
**Մասնակիցներ.** 10 մասնակից, գերմաներենից հայերեն և հայերենից գերմաներեն,  
հնարավորինս հավասար թվով

**Տևողությունը.** 21.10.-25.10.2024 /Ժամանում 20.10., մեկնում 26.10./:

**Մասնակցությունը պարտադիր է աշխատարանի ողջ ընթացքում:**

**Վայր.** Երևանի Գյոթե կենտրոն, Մհեր Մկրտչյան փողոց 1, 0010 Երևան

**Ծախսեր.** Աշխատարանին մասնակցության, կեցության և ճանապարհորդական  
/Էկոնոմ/ ծախսերը հոգում են կազմակերպիչները:

**Դիմելու համար ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.**

- Կարճ, ազատ ոճով գրված կենսագրություն՝ հրապարակած թարգմանությունների ցանկով/բնակավայրի և փոստային հասցեի տվյալներով/
- Հատված դեռևս չավարտված սեփական թարգմանությունից 5-7 էջի սահմաններում: Հրատարակչության հետ պայմանագիր չի պահանջվում, բայց խնդրում ենք նշել, կապ կա արդյոք հրատարակչության հետ: Տեքստերը ձևավորել հետևյալ ձևով. կրկնակի հեռավորություն տողերի միջև, նվազագույնը 12 տառաչափով, էջերի համարակալումը ձախ եզրին, աջ եզրին տեղ թողնել նշումների համար:
- Բնագիր տեքստի համապատասխան էջերը ֆայլի ձևաչափով/տողերի համարակալումը ձախ եզրին/:
- Կարճ տեղեկություն հեղինակի, ստեղծագործության և թարգմանական առանձնահատուկ դժվարությունների մասին/առավել. 1 էջ/:

Խնդրում ենք դիմումի բոլոր փաստաթղթերին նշել դիմողի անունը և էլեկտրոնային փոստով մինչև **30.06.2024** ուղարկել աշխատարանը վարողներին.

Հայերեն կողմի համար/թ. գերմաներենից հայերեն/՝ Գայանե Գինոյան՝

[gaya.ginoyan@gmail.com](mailto:gaya.ginoyan@gmail.com)

Գերմաներեն կողմի համար/թ. հայերենից գերմաներեն/՝ Վալերի Էնգլեր՝

[valerie.engler@posteo.de](mailto:valerie.engler@posteo.de)

Կազմակերպչական հարցերով՝ կեցություն, ճանապարհորդական և այլն, խնդրում ենք դիմել Երևանի Գյոթե կենտրոն.

Քրիստինե Գևորգյանին՝ [Kristine.Gevorgyan.extern@goethe.de](mailto:Kristine.Gevorgyan.extern@goethe.de)

Մարիամ Գուրզադյանին՝ [mariam.gurzadyan.extern@goethe.de](mailto:mariam.gurzadyan.extern@goethe.de)

Մեմինարի և դիմումի վերաբերյալ բովանդակային հարցերով խնդրում ենք դիմել աշխատարանը վարողներին վերը նշված էլեկտրոնային հասցեներով:

*Մրցույթի հայտարարությունը տրվում է խոստացված աջակցության բոլոր միջոցների առկայության պայմանով:*